

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Խաչիկ Գալստյան

Ղարաբաղյան հակամարտությունը, ժամանակագրական առումով լինելով առաջինը խորհրդային իրականության մեջ, միաժամանակ, աչքի է ընկնում նաև իր կարգավորման բարդությամբ: Հոդվածում դարաբաղյան կարգավորման ողջ պրոբլեմատիկայից առանձնացվել են չորս հիմնական՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի, փախստականների և տեղահանված անձանց, տարածքների ու զինված ուժերի հետքաշման, հաղորդակցության ուղիների վերաբացման և ապաշրջափակման բաղադրատարրերը:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացը վերլուծության է ենթարկվել նաև կարգավորման ձևաչափի հստակեցման ու դրա ապագա փոփոխության համատեքստում: Հիմնավորվում է այն կարծիքը, որ Ղարաբաղյան կարգավորման վերջին զարգացումներում որոշակիորեն նկատվում է կարգավորման ձևաչափի փոփոխություն դեպի խորհրդարանական դիվանագիտության ուղղություն: Այս առումով, հատկապես հայ խորհրդարանական դիվանագիտության համար կարևորվում է խորհրդարանական դիվանագիտության մեխանիզմների կիրառումը՝ որպես Ղարաբաղյան հիմնահարցը միջազգային կառույցներում հավուր պատշաճի ներկայացնելու իրական հիմք:

Ընդհանրապես, բախումնաբանության մեջ տիրապետող կարծիք է, որ էթնոքաղաքական հակամարտությունները դժվար են ենթարկվում կարգավորման: Այս առումով բացառություն չէ նաև Ղարաբաղյան հակամարտությունը, որի կարգավորմանն ուղղված ինչպես հակամարտող կողմերի, այնպես էլ միջազգային ջանքերը շարունակվում են արդեն 10 տարուց ավելի՝ առանց շոշափելի արդյունքների և լուրջ առաջընթացի:

Ղարաբաղյան հիմնահարցն աչքի է ընկնում նաև հակամարտությանը ներգրավված սուբյեկտների բազմազանությամբ, կարգավորման դինամիկայի վրա ազդող ներքին և արտաքին գործոնների բարդ համակցությամբ, տարածաշրջանում անընդհատ և արագ փոփոխվող աշխարհաքաղաքական վերադասավորումներով, որոնք, իրենց հերթին, որոշակիորեն ազդում են Ղարաբաղյան հակամարտության վրա՝ կարգավորման տեսանկյունից այն դարձնելով ավելի բարդ ու խճճված:

Մեր կարծիքով, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարներն առավել ցայտուն կարելի է բացահայտել վերլուծության երկու չափանիշների՝ բանակցային գործընթացի հիմնական բաղադրատար-

րերի և կարգավորման ձևաչափի չափանիշների կիրառման օգնությամբ: Բնականաբար, բանակցային գործընթացի բաղադրատարրերը կարող են շատ բազմազան լինել, ընդգրկելով ինչպես բանակցային հիմնական կողմերի մոտեցումների ճշգրտման, այնպես էլ բանակցությունների նախապատրաստման, կազմակերպման և անմիջական վարման հիմնահարցերը: Մեր պարագայում, «բանակցային գործընթացի հիմնական բաղադրատարրեր» հասկացությունը կիրառվում է իմաստային նեղ առումով և ենթադրում է միայն մինչ այժմ ասպարեզում եղած բանակցային փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով կարգավորման առանցքային հիմնահարցերի ճշգրտում և դրանց փոփոխման էվոլյուցիայի բովանդակային (կոնտենտ) վերլուծություն: Այս առումով, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման առանցքային հիմնահարցերն, ընդհանուր առմամբ, կարելի է ներկայացնել չորս հիմնական՝

- Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի,
- զինված ուժերի հետքաշման և երկուստեք վերահսկվող տարածքների,
- փախստականների և ներքին տեղահանված անձանց վերադարձի,
- հաղորդակցության ուղիների վերաբացման և շրջափակման վերացման հիմնահարցերի տեսքով:

Այս չորս առանցքային հիմնահարցերի լուծման եղանակները նպատակահարմար է ուսումնասիրել միջազգային միջնորդների կողմից ներկայացված չորս բանակցային փաստաթղթերի՝ 1997թ. հուլիսին ներկայացված «փաթեթային», 1997թ. դեկտեմբերին առաջադրված «փուլային» տարբերակների, 1998թ. նոյեմբերին շրջանառված «ընդհանուր պետության» և վերջապես՝ 2001թ. կողմերի միջև կայացած քիուեսթյան բանակցությունների համատեքստում:

1. Կարգավիճակի հիմնահարցը

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման առանցքային հիմնահարցերից մեկն է մնում ԼՂ կարգավիճակի որոշման հարցը: Ըստ առաջին միջնորդական նախաձեռնությունների (1992թ.), մասնավորապես, ԵԱՀԿ Մինսկի խմբի մանդատի շրջանակներում, ենթադրվում էր ԼՂ կարգավիճակի հարցը քննարկել Մինսկում հրավիրվելիք Ղարաբաղյան կարգավորման խաղաղ բանակցությունների ժամանակ: Այնպես որ, իրական բանակցություններից առաջ ի վերուստ Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակը կանխորոշելու յուրաքանչյուր փորձ (ինչպես դա եղավ 1996թ. Լիսաբոնի գագաթաժողովում) հակասում է ԵԱՀԿ նախնական մանդատի տառին և ոգուն:

Մինչ օրս բանակցությունների սեղանին դրված համապարփակ համաձայնագրի տարբերակներում ԼՂ կարգավիճակի հարցի լուծումն ունեցել է հետևյալ տեսքը.

ա. 1997թ. ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները Լիսաբոնից հետո, այդ գագաթաժողովի ազդեցության տակ, ներկայացրին մի փաստաթուղթ, որում ԼՂ կարգավիճակը ներկայացված էր Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում: Այդ առաջին՝ «*փաթեթային*» կոչվող փաստաթղթում ԼՂ կարգավիճակի հարցին լուծում էր տրվում համաձայնագրի *երկրորդ* մասում: Իսկ առաջին մասում, որը վերաբերում էր զինված հակամարտության դադարեցմանը, ենթադրվում էր զինված ուժերի դուրսբերում «գրավյալ» տարածքներից, բուֆերային գոտու ստեղծում և միջազգային խաղաղարար ուժերի տեղակայում, փախստականների և տեղահանված անձանց վերադարձ իրենց մշտական բնակության վայրերը, հաղորդակցական ուղիների ապաշրջափակում, երկաթուղային կապի ապահովում Ադրբեջանի և Հայաստանի միջև Բաքու-Հորադիզ-Մեղրի-Օրդուբադ-Նախիջևան-Երևան երթուղով, Լաչինի միջանցքի միջազգային վարձակալում (ԵԱՀԿ կողմից) և դրա տրամադրում ԼՂ իշխանություններին, Շուշիի և Շահումյանի շրջանի հարցերի լուծում և այլն: Համաձայնագրի երկրորդ մասը վերաբերում էր ԼՂ կարգավիճակին, որի երկրորդ կետով Լեռնային Ղարաբաղը պետական և տարածքային կազմավորում էր հանդիսանում Ադրբեջանի Հանրապետության (ԱՀ) սահմաններում: Ընդ որում Լեռնային Ղարաբաղին թույլատրվում էր ունենալ սեփական սահմանադրություն, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններ, զինանշան, դրոշ և հիմն: Սակայն այն սկզբունքի ամրագրումը, որ ԼՂ կարգավիճակի հարցն ի սկզբանե պետք է դիտարկել Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման շրջանակներում, լուրջ խոչընդոտ հանդիսացավ բանակցությունների հետագա ընթացքի համար և մերժվեց հակամարտության մասնակից երկու կողմերի՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների կողմից:

բ. Նույն թվականին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից ներկայացված դարաբաղյան կարգավորման երկրորդ առաջարկը հենվում էր «*փուլային*» եղանակով հակամարտող կողմերի միջև համաձայնության հասնելու մեթոդի վրա: Ըստ այդ տրամաբանության առաջնային էր համարվում զինված հակամարտության հետևանքների վերացման հիմնախնդիրը, այսինքն՝ զինված ուժերի դուրսբերման (*հոդված 2*), բուֆերային գոտու ստեղծման և միջազգային խաղաղարար ուժերի տեղաբաշխման (*հոդված 3*), փախստականների և տեղահանված անձանց վերադարձի (*հոդված 5*) խնդիրները և միայն դրանից հետո փաստաթուղթը ենթադրում

եր, որ «երեք կողմերը, վերջ դնելով հակամարտության ռազմական կողմին, համաձայնության են գալիս բարեխղճորեն շարունակել բանակցությունները ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում՝ մինչև հակամարտության մյուս ասպեկտների համապարփակ կարգավորումը, այդ թվում նաև քաղաքական ասպեկտը, որը ներառում է ԼՂ կարգավիճակի, ինչպես նաև Լաչինի, Շուշիի և Շահումյանի հիմնահարցերի լուծումը» [1, c. 156]: Այս մոտեցումը որպես հիմք ընդունեցին ՀՀ-ն և ԱՀ-ն, սակայն մերժվեց Լեռնային Ղարաբաղի կողմից, քանի որ երաշխիքներ չկային, թե ԼՂ կողմից վերահսկվող տարածքների վերադարձից հետո հանկարծ ադրբեջանական իշխանությունների մոտ չէր անհետանա բանակցությունների հետագա շարունակման ցանկությունը:

գ. 1998թ. ներկայացված «*ընդհանուր պետության*» հայեցակարգի վրա հիմնվող բանակցային փաստաթղթում նկատելի էր որակական անցում հակամարտության հիմնական բաղադրատարրերի լուծման ուղիների ընդունման հարցում: Մասնավորապես, հակամարտության կարգավորման կարևորությամբ առաջին հիմնահարցն էր դիտարկվում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի շուրջ սկզբունքային համաձայնության ձեռքբերումը: Համաձայնության տեքստի առաջին մասում նշվում էր, որ «Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է պետական և տարածքային կազմավորում հանրապետության ձևով, որը կազմավորում է ընդհանուր պետություն Ադրբեջանի հետ» [1, c. 158]: Բացի վերը նշված ձևակերպումից, ԼՂ կարգավիճակը ներառում էր նաև այնպիսի իրավասությունների ձեռքբերում, ինչպիսիք էին հանրաքվեի միջոցով սեփական սահմանադրության ընդունումը, պետականության ատրիբուտները, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինները և այլն: Միաժամանակ, հենվելով կողմերի հռչակած «սիմետրիկ փոխզիջման»¹ եղանակով որոշումների ընդունման մեթոդաբանության վրա, այդ փաստաթղթում լուծում էր առաջարկվում նաև Շուշիի և Շահումյանի ապագա կարգավիճակների համար:


դ. Ղարաբաղյան հակամարտության կարգավորման մյուս փուլը համընկնում է 2001թ. սկզբներից բանակցային գործընթացում նկատվող որոշակի ակտիվացման հետ, որն իր արտացոլումը գտավ փարիզյան և քիուեսթյան բանակցություններում: Այսպես կոչված «*Փարիզյան սկզբունքների*» հիման վրա կազմված «*Քիուեսթյան համաձայնագրի*» փաթեթում Լեռնային

¹ Համատեղ որոշումների ընդունման «սիմետրիկ փոխզիջման» եղանակը ենթադրում է բանակցային հիմնախնդիրների և հիմնական տարաձայնությունների *համարժեք* ձևակերպում և ներկայացում: Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համատեքստում այն դրսևորվում էր հետևյալ կերպ. օրինակ, եթե խոսքը Շուշիի, որը գտնվում է հայկական վերահսկողության ներքո, նախկին ադրբեջանցի բնակիչների վերադարձի մասին էր, ապա դրան համարժեք փոխզիջում դիտարկվում էր ադրբեջանցիների կողմից ներկայումս վերահսկվող Շահումյանի շրջան հայերի վերադարձի հարցը: Կամ, եթե քննարկվում էր Լաչինի հաղորդակցական միջանցքի հարցը, ապա դրան համարժեք փորձ էր արվում առաջ քաշել ևս մեկ հաղորդակցական միջանցքի գաղափար, որով Նախիջևանը կկապվեր Ադրբեջանի հետ:

Ղարաբաղի կարգավիճակն ամրագրված էր համաձայնագրի երկրորդ հոդվածում, ըստ որի՝ դե ֆակտո ամրագրվում էր, որ նախկին ադրբեջանական Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքը Ադրբեջանի վերահսկողության տակ չէ և անցնում է Հայաստանի ինքնիշխանության ներքո: Փաստորեն, սրանով ամրագրվում էր Լեռնային Ղարաբաղի փաստացի գոյությունը և Ադրբեջանի վերջնական վերահսկողության կորուստն այդ տարածքի նկատմամբ:

Այսպիսով, կարելի է փաստել, որ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում բանակցային բաղադրատարրերից մեկի՝ ԼՂ կարգավիճակի առաջնայնության հարցն ունեցել է որոշակի վայրիվերումներ, մերդրնդմերթ հանդիսանալով կարգավորման առանցքային հիմնահարցը՝ միաժամանակ նաև իր կարևորությամբ տեղը զիջելով կարգավորման այլ բաղադրատարրերին: Գրաֆիկորեն ԼՂ կարգավիճակի առաջնայնության տատանումներն ունեն հետևյալ տեսքը.

ԼՂ կարգավիճակի առաջնայնությունը



Ինչպես երևում է գրաֆիկից, ԼՂ կարգավիճակի հիմնահարցը, կարգավորման առաջնայնության տեսակետից, իր ցածրակետին է եղել 1997թ. ներկայացված ԵԱՀԿ Մինսկի խմբի «փափեթային» և «փուլային» տարբերակներում, իսկ կարևորությամբ առաջինը՝ 1998թ. քննարկման դրված «ընդհանուր պետության» հայեցակարգի մեջ: Դրանից հետո, ըստ էության, նկատելի է ԼՂ կարգավիճակի առաջնայնության նվազում: Դա կարելի է բացատրել մի քանի հանգամանքներով:

Հակամարտության երկարամյա չկարգավորվածությունն աստիճանաբար առաջին պլան է մղում հակամարտության հումանիտար ասպեկտների լուծման հիմնախնդիրները, որոնցից առաջնային են համարվում փախստականների և տեղահանված անձանց հետ կապված հարցերը: Այս հիմնախնդիրների առաջաշումը՝ առանց հակամարտության կարգավորման մնացած ասպեկտների, այդ թվում նաև ԼՂ կարգավիճակի հստակ ամրագրման, իրականում խոչընդոտում են Ղարաբաղյան հակամարտության համապարփակ կարգավորման գործընթացին, քանի որ ամբողջական փաթեթի առան-

ձին հարցերի լուծումը կարող է թուլացնել կողմերից մեկի հետաքրքրությունը բանակցային հետագա առաջխաղացման նկատմամբ, ինչն, իր հերթին, անորոշ ժամանակով կձգձգի վերջնական կարգավորման գործընթացը:

Հակամարտության կարգավորման գործընթացը ներկայումս տեղափոխված է այնպիսի միջազգային ատյաններ, որոնց շրջանակներում, ՀՀ ԱԳ նախարար Վ.Օսկանյանի կարծիքով, նախապատվությունը տրվում է պետությունների տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքին [2]: Մասնավորապես, ԵԱՀԿ շրջանակներում, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ներկա գործընթացների համատեքստում, կարելի է փաստել, որ ի սկզբանե այդ կառույցի ստեղծման հիմնարար սկզբունքներից են սահմանների անխախտելիությունը և պետությունների տարածքային ամբողջականությունը, որոնցում արտացոլվում էին ինչպես Վարշավյան պայմանագրի կազմակերպության անդամ երկրների, այնպես էլ արևմտյան երկրների տրամադրություններն ու ցանկությունները [3]: Նմանատիպ մոտեցումներ են ամրագրված նաև 2004-2005թթ. ընթացքում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ միջազգային տարբեր կառույցների և կազմակերպությունների կողմից ներկայացված զեկույցներում: Մասնավորապես, նման միտումներ են նկատվում 2004-2005թթ. ԵԽԽՎ շրջանակներում ներկայացված Թ.Դևիսի և Դ.Աթկինսոնի զեկույցներում, ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի շրջանակներում Գորան Լեն Մարկերի և «Միջազգային ձգնաժամային խումբ» միջազգային ոչ կառավարական կազմակերպության կողմից ԼՂ հակամարտությանը նվիրված զեկույցներում: Դրանցում ԼՂ կարգավիճակի հարցը կամ քննարկվում է Ադրբեյջանի կազմում ինքնավար կառավարման բարձրագույն աստիճանի տրամադրման ենթատեքստում, կամ էլ «հետաձգվող կարգավիճակի» հայեցակարգի շրջանակներում՝ առաջարկելով Լեռնային Ղարաբաղում «լրացուցիչ հանրաքվեի»¹ անցկացման գաղափարը: Ըստ դրա՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը կորոշվի 10-20 տարի հետո, երբ այնտեղ կվերադառնան ադրբեյջանցի բնակիչները և նրանց մասնակցությամբ, միջազգային դիտորդների ներկայությամբ, կիրականանա ԼՂ կարգավիճակին նվիրված հանրաքվեն [4]: Այս մոտեցումները, միգուցե, բխում են նրանից, որ հենվում են նաև Ղարաբաղյան հակամարտության կարգավորման սկզբունքների սխալ մեկնաբանման և շեշտադրման վրա: Այսպես, «ինքնորոշման իրավունքի» մասին խոսելիս չպետք է միջազգային հանրու-

¹ «Լրացուցիչ հանրաքվեի» գաղափարը ներկայումս լայնորեն շրջանառվում է ինչպես Եվրոպայի խորհրդի, այնպես էլ Հայաստանի ներքաղաքական քննարկումների շրջանակներում: Մեր կարծիքով, Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդն արդեն մեկ անգամ և մեկընդմիջտ ինքնորոշվել է ազատ, անկախ պետականության կայացման օգտին, որն արդեն կայացած փաստ է, և այն հնարավոր չէ կասկածի տակ դնել ոչ մի դեպքում, ոչ մի «լրացուցիչ հանրաքվեի» անցկացման պատրվակով:

թյանն ապացուցել, որ Լեռնային Ղարաբաղի հայությունն իրավունք ունի ինքնորոշվելու (այդ դեպքում նոր հանրաքվեի գաղափարը կարող է տրամաբանական թվալ), այլ պետք է ցույց տալ, որ Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդը, օգտվելով իր ինքնորոշման իրավունքից, *վաղուց այն իրականություն է դարձրել*: Այս առումով հարկ է նշել, որ Լեռնային Ղարաբաղի հայության ինքնորոշման իրավունքի իրականացումը և անկախ պետականության հռչակումը հենվում են շատ լուրջ միջազգային իրավական պրակտիկայի վրա: Մասնավորապես, ինքնորոշման իրավունքի իրականացումը դիտարկվում է որպես երկարամյա և բազմափուլ գործընթաց, որի դեպքում ինքնորոշվող սուբյեկտը, անկախ պետականության հարցը բարձրացնելու համար, պետք է առնվազն անցնի «ներքին» և «արտաքին» ինքնորոշման ճանապարհով [5, 6]: Ընդ որում՝ «արտաքին ինքնորոշման» հարց ժողովուրդը կարող է բարձրացնել միայն «ներքին ինքնորոշման» փուլն անցնելուց հետո: «Ներքին» ինքնորոշումն այս դեպքում ընկալվում է որպես մեկ պետության՝ մետրոպոլիայի, կազմում ինքնակառավարման իրականացում: Իսկ «արտաքին» ինքնորոշման իրականացման կառուցակարգը ենթադրում է ժողովրդի կողմից սեփական քաղաքական կարգավիճակի որոշում: Լեռնային Ղարաբաղի հայությունն, ըստ էության, շուրջ յոթանասուն տարի գտնվել է «ներքին ինքնորոշման» իրականացման փուլում (այսինքն՝ լայն ինքնավարություն այլ պետության կազմում), որի ինքնորոշման իրավունքի իրականացումն ու անկախ պետականության հռչակումն ամբողջովին տեղավորվում է այս հայեցակարգի տրամաբանության մեջ և կասկածից վեր է:

2. Փախստականների հիմնահարցը ղարաբաղյան կարգավորման համատեքստում

Փախստականների և տեղահանված անձանց իրենց նախկին բնակության վայրերը վերադառնալու խնդիրը նույնպես մինչ օրս բազմաթիվ տարածայնությունների տեղիք տվող հիմնահարցերից է: Այս հիմնահարցի լուծման դժվարությունը նախնառաջ կախված է նրանից, թե ինչ են հասկանում կողմերը «փախստական» կամ «տեղահանված անձ» ասելով և ովքեր են հանդես գալիս այդ կարգավիճակներով: Ըստ ադրբեջանական տեսակետի՝ «փախստականներ» են համարվում Հայկական ԽՍՀ-ից 1989-1990թթ. տեղահանված ադրբեջանցիները (մոտ 160.000 մարդ), իսկ «ներքին տեղահանված անձանց» կարգավիճակին համապատասխանում են Լեռնային Ղարաբաղից (շուրջ 35.000 մարդ) և հարակից շրջաններից (մոտ 300.000) տեղահանված ադրբեջանցիները: Ադրբեջանական արտաքին քարոզչության առանցքային դրույթներից մեկն է փախստականների և տեղահան-

վածների մեկ միլիոնանոց թվաքանակի ներկայացումը՝ որպես ավելի պատկառազորու և հրատապ լուծում պահանջող հարց: Իրականում, և՛ Հայաստանից, և՛ Լեռնային Ղարաբաղից, և՛ ԼՂ հարակից շրջաններից գնացած ադրբեջանցիների թվաքանակը, միասին վերցրած, *չի անցնում հինգ հարյուր հազարը*: Այդ պարագայում արդեն տրամաբանական հարց կարող է առաջանալ՝ իսկ որտեղից է վերցված մեկ միլիոնանոց փախստականների և տեղահանված մարդկանց զանգվածը: Բանն այն է, որ իսկապես այդ մեկ միլիոնի մնացած հինգ հարյուր հազարը կազմում են Ադրբեջանի ազգությամբ հայ այն քաղաքացիները, որոնք 1988-1990թթ. Ադրբեջանում տեղի ունեցած էթնիկ գոտումների արդյունքում ստիպված եղան թողնել իրենց ողջ ունեցվածքը և կյանքին սպառնացող անմիջական վտանգի առկայության պայմաններում հայտնվեցին իրենց պատմական հայրենիքից դուրս: Հետևաբար, հայկական դիրքորոշումների համաձայն, ըստ միջազգային իրավունքի, «փախստականի» կարգավիճակը կարող է տարածվել միայն այդ մոտ կես միլիոն մարդկանց վրա, որոնք հակամարտության իրական զոհը հանդիսանալով՝ այսօր գտնվում են անմխիթար վիճակում: Այդ իսկ պատճառով այսօր Ադրբեջանը չի պնդում «փախստական» իրավական ձևակերպման վրա, այլ ավելի շատ խոսում է տեղահանված անձանց հիմնահարցերի առաջնային լուծման մասին, լավ հասկանալով, որ այս պարագայում «փախստական» իրավական կատեգորիայի կիրառումն աշխատում է ի վնաս իրեն: Ըստ էության, «փախստականներ» կարելի է համարել միայն նախկինում Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում բնակվող ադրբեջանցիներին, այն էլ մի քանի լուրջ վերապահումներով.

- Հայկական ԽՍՀ-ում բնակվող ադրբեջանցիների մեծ մասը հեռացել է խաղաղ պայմաններում, իսկ նրանց տեղահանումը կազմակերպվել է ԽՍՀՄ համապատասխան զինված ստորաբաժանումների ուղեկցությամբ, անվտանգ պայմաններում,
- այդ ընթացքում ադրբեջանցիներից շատերը հասցրել էին իրենց տներն ու ունեցվածքը վաճառել Բաքվից, Սումգայիթից, Կիրովաբադից (ներկայումս՝ Գյանջա) և այլ վայրերից մազապուրծ հայերին կամ փոխանակել վերջիններիս ունեցվածքի հետ,
- Հայաստանի հյուսիսային շրջաններում՝ Լոռիում, Շիրակում և Տավուշում բնակվող ադրբեջանցիները 1988թ. դեկտեմբերյան երկրաշարժի ժամանակ ստացել էին ունեցվածքի համարժեք փոխհատուցում՝ ինչպես երկրի մնացած բնակիչները, և իրենց բնակության վայրերը լքել էին սոցիալ-տնտեսական ծանր պայմաններից ելնելով:

Այսինքն՝ այդ մարդկանցից շատերին դասական առումով «փախստական» համարել չի կարելի, քանի որ, համաձայն միջազգային իրավական

սահմանման, փախստական է կոչվում այն անձը, որը «ռասայական, դավանանքի, քաղաքացիության, քաղաքական կամ էլ որոշակի սոցիալական խմբին պատկանելության համար հետապնդումների հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող օգտվել այդ պետության պաշտպանությունից կամ էլ չի ցանկանում օգտվել այդ պաշտպանությունից վերը նշված սպառնալիքների պատճառով»: Այլ կերպ ասած՝ փախստական է այն խաղաղ բնակիչը, որը հակամարտության արդյունքում հայտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս:

Այդ առումով պետք է նշել, որ ԼՂ-ին հարակից ադրբեջանական շրջանների բնակիչներն ակտիվորեն ներգրավված են եղել ինչպես ռազմական գործողություններում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի շրջափակմանը, այդ իսկ պատճառով ևս փախստական համարվել չեն կարող:

Խնդրահարույց է տեղահանված անձանց կարգավիճակի հստակեցման հարցը: Ըստ ադրբեջանական դիրքորոշման՝ հակամարտության արդյունքում այդ կարգավիճակը ձեռք են բերել բացառապես ադրբեջանցիները, որոնք ստիպված են եղել լքել ԼՂ-ին հարակից մշտական բնակության վայրերը և տեղափոխվել են նույն երկրի այլ մասեր: Այս կապակցությամբ հարց կարող է առաջանալ. իսկ Ղարաբաղյան հակամարտության համատեքստում կա՞ն, արդյոք, ազգությամբ հայ ներքին տեղահանվածներ, թե՞ այդ կատեգորիան տարածվում է միայն ԼՂ-ին հարակից Ադրբեջանի յոթ շրջաններում բնակվող ադրբեջանցիների նկատմամբ:

Պարզվում է, որ «սիմետրիկ փոխզիջման» տրամաբանության համաձայն՝ բռնի կերպով «ներքին տեղահանված անձանց» կարգավիճակ ունեն Լեռնային Ղարաբաղի Մարտունու, Մարտակերտի և հայաբնակ Շահումյանի շրջաններից գաղթած հայ տեղաբնակները, քանի որ 1991թ. սեպտեմբերի 2-ի, իսկ այնուհետև դեկտեմբերի 10-ի հանրաքվեով այդ տարածքներում ևս հռչակվել էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Հետևաբար, այդ տարածքների բնակիչները, հանդիսանալով ԼՂ քաղաքացիներ, ստիպված են եղել լքել իրենց բնակության վայրերն ադրբեջանական օկուպացիայի արդյունքում և հայտնվել իրենց երկրի՝ Լեռնային Ղարաբաղի այլ շրջաններում:

Այնպես որ, համարժեքության առումով, ադրբեջանցի «ներքին տեղահանված անձանց» հիմնախնդիրը պետք է դիտարկել ԼՂ Մարտունու, Մարտակերտի և Շահումյանի շրջաններից տեղահանված հայերի՝ իրենց բնակության վայրերը վերադառնալու հարցին զուգահեռ՝ պահպանելով փոխզիջումային եղանակով համաձայնության գալու հակամարտող կողմերի որդեգրած տրամաբանությունը:

Մինչ այժմ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային փաստաթղթերում փախստականների և տեղահանված անձանց հիմ-

նախնդիրներին վերաբերող ձևակերպումների առումով պետք է նշել, որ դրանք նույնպես որոշակի փոխակերպման են ենթարկվել, թեև կարելի է պնդել, որ այդ ձևակերպումները, այնուամենայնիվ, ամբողջությամբ չեն արտացոլում փախստականների և տեղահանված անձանց հետ կապված խնդիրը: Այսպես, 1997թ. «*Վիաթեթային*» տարբերակում կարգավորման բաղադրատարրերի մեջ առաջնային կարևորության հարցեր էին դիտարկվում «տեղահանված անձանց» վերադարձի խնդիրը (*հոդված 5*) և նրանց տեղաբաշխումը բաժանարար գծի երկայնքով: Բնականաբար, այդ բաժանարար գիծն ընդգրկում էր միայն ԼՂ-ին հարակից շրջանները, իսկ համաձայնագրի մեջ չէր խոսվում Ադրբեջանի հայ փախստականների վերադարձի մեխանիզմների մասին՝ բավարարվելով միայն անորոշ ձևակերպմամբ. «Կողմերը համաձայնում են համագործակցել Միջազգային Կարմիր խաչի, ՄԱԿ փախստականների հարցով գերագույն հանձնակատարի և այլ միջազգային կազմակերպությունների հետ՝ հակամարտության արդյունքում տեղահանված անձանց, անհայտ կորածների վերադարձի շուրջ» [1, c. 147]:

Հակամարտության կարգավորման «*Վոլյային*» տարբերակում, ըստ էության, շատ վիճահարույց հարցեր, այդ թվում նաև ԼՂ կարգավիճակի, փախստականների վերադարձի, Լաչինի, Շուշիի և Շահումյանի հիմնահարցերը թողնվում էին հետագային, իսկ կողմերը պարտավորվում էին միայն «բարեխղճորեն» շարունակել բանակցությունները հակամարտության մնացած ասպեկտների վերացման ուղղությամբ [1, c. 156]:

Հաջորդ «*ընդհանուր պետության*» փաթեթում, Շուշիի և Շահումյանի հիմնախնդիրներին նվիրված երրորդ գլխում նշվում էր. «Կողմերը համաձայնում են, որ բոլոր *ադրբեջանցի փախստականները* կարող են վերադառնալ իրենց բնակության վայր Շուշի» [1, c. 161]: Ինչպես երևում է ձևակերպումից, Շուշիի ադրբեջանցիների՝ փախստականի կարգավիճակով հանդես գալը մի բան կարող է միայն նշանակել, այն, որ *նրանք տեղաշարժվել են մեկ պետության տարածքից (այսինքն՝ ԼՂ-ից) մեկ այլ պետության (այն է՝ Ադրբեջանի Հանրապետության) տարածք*, որն առավել օբյեկտիվորեն է արտացոլում Լեռնային Ղարաբաղից հեռացած փախստականների իրավական կարգավիճակը:

Քիուեսթյան փաստաթղթում, քանի որ հարցը ներկայացվում էր ՀՀ-ԱՀ հակամարտության համատեքստում, փախստականների հարցին տրված էր այնպիսի լուծում, ըստ որի՝ յուրաքանչյուր կողմ ինքն է փոխհատուցում իր ազգակիցների (փախստականների) կորուստները և պարտավորվում է հետագայում որևէ պահանջ չներկայացնել հակառակ կողմին՝ կապված ԼՂ հակամարտության հետ (*հոդված 12*):

Կարծում ենք՝ նման մոտեցումը մասամբ արդարացված կարելի է համարել: Այսօր առավել իրատեսականը Հայաստանից և Ադրբեջանից գնա-

ցածների համար հենց փոխհատուցումների մեխանիզմի կիրառումն է, սակայն ոչ թե «յուրաքանչյուրն իր համար» սկզբունքի համաձայն, այլ կիրառելով դիֆերենցված մոտեցում Ադրբեջանից և Հայաստանից հեռացած փախստականների նկատմամբ, քանի որ կյանքին սպառնացող անմիջական վտանգների, գույքի, կայքի և ունեցվածքի կորուստների առումով դրանք անհամեմատելի մեծություններ են: Ադրբեջանից գաղթած հայերի թիվը գրեթե երեք անգամ շատ է Հայաստանից գաղթած ադրբեջանցիների թվաքանակից՝ գումարած նաև այն հանգամանքը, որ հայերի մեծ մասը մազապուրծ փախել է Ադրբեջանից, մինչդեռ հայաստանաբնակ ադրբեջանցիների մեծ մասը վաճառել է ունեցվածքն ու խաղաղ հեռացել Հայաստանից:

Ինչ վերաբերում է «ներքին տեղահանված անձանց» խնդրին, ապա այդ հիմնահարցը պետք է լուծել ադրբեջանցի և հայ «ներքին տեղահանվածների» խնդիրների համարժեք կարգավորման ճանապարհով՝ ԼՂ վերահսկողության տակ գտնվող տարածքներում ապրող ադրբեջանցիների վերադարձը կապելով ԼՂ Մարտունու, Մարտակերտի, Շահումյանի և Գետաշենի¹ շրջանների հայերի՝ իրենց բնակության վայրերը վերադառնալու հարցի հետ:

3. Զինված ուժերի հետքաշման և տարածքների վերադարձի խնդիրը

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման մյուս առանցքային և առավել վիճահարույց հարցերից են հակամարտության գոտուց զինված ուժերի հետքաշումը, այնտեղ միջազգային խաղաղարար ուժերի տեղաբաշխումը և տարածքների վերադարձը: Ըստ 1994թ. Բուդապեշտի գագաթաժողովում ընդունված որոշման՝ համաձայնություն էր ձեռք բերվել ԵԱՀԿ միջազգային խաղաղարար ուժերի կազմավորման և հակամարտության գոտում նրանց տեղակայման մասին [7]: Ի սկզբանե տարածայնությունների առիթ հանդիսացավ միջազգային խաղաղարար ուժերի կազմի ճշգրտման հարցը:

Զինված հակամարտության դադարեցման գործում մեծ ակտիվություն և դերակատարում ցուցաբերած Ռուսաստանի համար օպտիմալ լուծում կլինեք արխազական և մերձդնեստրյան սցենարների կիրառումը, ըստ որոնց՝ հակամարտության գոտում կտեղակայվեն ԱՊՀ խաղաղապահ

¹ Վերոհիշյալ տարածքները ներկայումս բռնազավթված են ադրբեջանական ուժերի կողմից, իսկ քանի որ Շահումյանի հայաբնակ շրջանը 1991թ. սեպտեմբերի 2-ին մասնակցել է ԼՂ անկախության հանրաքվեին և նախկին ԼՂԻՄ-ի հետ միասին է դուրս եկել Ադրբեջանի կազմից, ապա այնտեղ բնակվող հայերը, որոնք հակամարտության արդյունքում ստիպված են եղել թողնել մշտական բնակության վայրերը, իրենց միջազգային իրավական կարգավիճակով համապատասխանում են «ներքին տեղահանված անձանց» կարգավիճակին:

ուժերը, իսկ դա հիմնականում ենթադրում էր մեծ մասամբ միայն ռուսական զորքերի ներկայություն տարածաշրջանում:

Բնականաբար, դա ԵԱՀԿ անդամ մյուս երկրների կողմից դիտվում էր որպես հարավկովկասյան տարածաշրջանում Ռուսաստանի նեոկայսերապաշտական նկրտումների դրսևորում: Արդյունքում՝ հակամարտության գոտում խաղաղաբար ուժերի տեղակայման հարցն ընդհանուր հավանության չարժանացավ: Լուրջ հակասությունների տեղիք էր տալիս նաև Ռուսաստանից գատ ԵԱՀԿ մյուս պետությունների խաղաղաբար մասնակցությունը: Մասնավորապես, հայկական կողմերը վերապահում ունեին Թուրքիայի զինված ուժերը բաժանաբար գոտում տեղակայելու վերաբերյալ, քանի որ այդ պետությունը հստակորեն հանդես էր գալիս հակամարտող կողմերից մեկին՝ Ադրբեջանին միակողմանի աջակցության օգտին, բազմիցս ուղղակիորեն անթաքույց օգնություն ցուցաբերելով պաշտոնական Բաքվին: Բացի այդ, 1914-1923թթ. Թուրքիայի կողմից Հայոց մեծ եղեռնի իրականացումը, Հայաստանի Հանրապետության շարունակական շրջափակումը, Ադրբեջանին ուղղակի ռազմական և միջազգային դիվանագիտական օգնության ցուցաբերումը հայերի մեջ պատմականորեն ձևավորել են որոշակի անվստահություն այդ պետության նկատմամբ՝ ի դեմ որի հայերը տեսնում են իրենց ազգային անվտանգության լուրջ սպառնալիք:

Այդ իսկ պատճառով քիուեսության բանակցությունների ժամանակ համաձայնեցվել էր մի բանաձև, ըստ որի՝ Ղարաբաղյան հակամարտության գոտի ուղարկվող ԵԱՀԿ զորակազմի մեջ ընդգրկվելու էին ԵԱՀԿ այն պետությունները, որոնք փոխադարձաբար ընդունելի էին հակամարտող կողմերի համար, բացի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների, ինչպես նաև հակամարտող կողմերի հարևան երկրների զինված ուժերի ներկայացուցիչների (*հոդված 15*):

Պետք է ասել, որ հակամարտության գոտում միջազգային խաղաղաբար ուժերի տեղակայման հարցում մտահոգության մեկ այլ առիթ ևս գոյություն ունի: Մինչ այժմ, շուրջ 11 տարի, հրադադարը հիմնականում պահպանվում է առանց որևէ օտար զինված ներկայության, գուցե հակամարտող կողմերի քաղաքական կամքի շնորհիվ: Հետևաբար, միջազգային ստորաբաժանումների տեղակայումը կարող է լարվածության նոր ակիք առաջացնել հայերի և ադրբեջանցիների միջև: Այնպես որ, հակամարտության կարգավորման հետագա ծրագրերում, մեր կարծիքով, պետք է այս առանձնահատկությունը հաշվի առնել և մշակել կարգավորման այնպիսի տարբերակ, որը հենվի բացառապես հակամարտող կողմերի՝ Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի Հանրապետությունների քաղաքական կամքի և պատասխանատվության վրա:

Նման մոտեցման հիմք կարող է ծառայել հակամարտության գոտում, այսպես կոչված, «փորձնական գոտիների» ստեղծումը, որը կենթադրյալ ռազմական, տեխնիկական ապահովման և անվտանգության տեսանկյունից երկուստեք վերահսկվող այնպիսի տարածքների փոխանակում, որոնք փոքրիկ, փորձնական մակարդակում կապահովվեն զորքերի հետքաշումը և այնտեղ նախկին բնակիչների վերադարձը: Դա էլ, իր հերթին, կարող է էապես մեծացնել փոխադարձ վստահության մակարդակը, որից հետո, միայն, քայլ առ քայլ կարելի կլինի հաջողված փորձը կիրառել, թերևս, ավելի լայն ծավալով:

Ի հավելումն՝ որպես խաղաղարար ուժեր, մեր կարծիքով, հնարավոր է կիրառել երկրագնդի այլ թեժ կետերում (մասնավորապես՝ Կոսովոյում) հայ և ադրբեջանցի խաղաղապահ գումարտակների մասնակցության ու համատեղ գործողությունների իրականացման փորձը: Այլապես, ավելի լայն ընդգրկմամբ զինված ուժերի դուրսբերումը, ինչպես ենթադրվում էր մինչ այժմ գոյություն ունեցող բանակցային համաձայնագրերի տարբերակներում, նման խիստ բևեռացված դիրքորոշումների, փոխադարձ անհանդուրժողականության պարագայում կասկածելի է թվում:

4. Հաղորդակցական ուղիների վերաբացման և սպաշրջափական հիմնախնդիրը

Ղարաբաղյան կարգավորման առանցքային մյուս հիմնահարցը վերաբերում է հաղորդակցության ուղիների վերաբացմանը և սպաշրջափականին: Ընդհանրապես, կարելի է նկատել, որ կարգավորման մինչ օրս առկա փաստաթղթերում այս հիմնահարցին շատ մեծ տեղ չի տրվում՝ բավարարվելով ընդամենը մեկ հոդվածի շրջանակներում (բոլոր երեք տարբերակներում էլ այս հիմնահարցը քննարկվում է *հոդված 6-ում*) [8]: Մասնավորապես, նախատեսվում էր բացել հաղորդակցության ուղիները՝ ճանապարհային և երկաթուղային հաղորդակցությունը, կապի և էլեկտրահաղորդակցության գծերը, վերականգնել առևտրային և այլ բնույթի հարաբերությունները:

Ծավալային առումով նման ընդգրկումը, թերևս, կարող է նշանակել, որ այս հիմնահարցն իր կարևորությամբ զիջում է կարգավորման մնացած բաղադրիչներին: Իրականում այս հիմնախնդիրը սերտորեն կապված է Ղարաբաղյան կարգավորման հիմնական ռազմավարական մոտեցումների ճշգրտման հետ՝ *համագործակցություն և կարգավորումից առաջ, թե՛ կարգավորում, հետո նոր միայն համագործակցություն*:

Ինչպես հայտնի է, ադրբեջանական կողմը որդեգրել է երկրորդ մոտեցումը, որի պաշտոնական դիրքորոշումը խարսխված է այն դրույթի վրա,

որ համագործակցությունը հնարավոր է միայն Ղարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորումից հետո: Այս պաշտոնական տեսակետն ուղղակի արտացոլվում է նաև Ադրբեջանի վարած քաղաքականության մեջ, որի հիմնական առանցքը ՀՀ-ի և ԼՂ-ի նկատմամբ «մեկուսացման» քաղաքականության իրականացումն է՝ փորձելով հայկական կողմերին դուրս մղել տարածաշրջանային նախագծերից, ինչպես նաև տարբեր մակարդակներում արգելակել հայկական կողմերի հետ համագործակցության բոլոր առաջարկները: Այդ քաղաքականության վառ ապացույցն է նաև Թուրքիայի հետ համատեղ տարածաշրջանային այնպիսի ծրագրերի ֆինանսավորումը, որոնք անթաքույց հակահայկական ուղղվածություն ունեն և շրջանցում են Հայաստանը (խոսքը, մասնավորապես, վերաբերում է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի, Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթգծի կառուցմանը և այլն):

Ադրբեջանի որդեգրած «նախ կարգավորում, ապա համագործակցություն» բանաձևը չի համապատասխանում նաև հակամարտության կարգավորման ներքին տրամաբանությանը, քանի որ հաղորդակցության ուղիների վերաբացման և ապաշրջափակման կամ, ընդհանուր առմամբ, համագործակցության հիմնահարցը անհնար է դիտարկել կարգավորման ընդհանուր գործընթացից դուրս: Այն կարգավորման բաղադրիչներից է, ուստի պետք է իրականացվի կարգավորման գործընթացին զուգահեռ: Ավելին, ոչ ոք չի վիճարկում այն հանգամանքը, որ հակամարտող կողմերի միջև ձևավորված է անվստահության մի մեծ պատվար, առանց որի հաղթահարման անհնար է այն կարգավորել: Նման դեպքերում միայն փոխադարձ անվստահության աստիճանական հաղթահարումը, վստահության վերականգնումը կարող են հակամարտության կարգավորման իրական բանալի լինել: Այդ առումով հարկ է նշել, որ հայկական կողմերի դիրքորոշումներն ավելի կառուցողական են: Մասնավորապես, միայն ղարաբաղյան կողմը ժամանակին *քառասունից ավելի* համագործակցության առաջարկներ է արել ադրբեջանական կողմին սահմանային հիմնահարցերի, համատեղ ջրօգտագործման, բնապահպանական և այլ ոլորտների վերաբերյալ, որոնք բոլորն էլ մերժվել են Ադրբեջանի կողմից: Նմանատիպ առաջարկներ են եղել նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից:

1997թ. համանախագահները, կարգավորման փաթեթին զուգահեռ, ներկայացրել էին նաև հակամարտող կողմերի միջև վստահության վերականգնման առաջարկներ. Իջևան-Ղազախ շփման գծի երկայնքով համատեղ միջոցառումների իրականացում (ի դեպ, ժամանակին լրջորեն քննարկվում էր նաև վրացական Սադախլո սահմանային անցակետի փոխարեն հայ ադրբեջանական առևտրային շփումները տեղափոխել Իջևան-

Ղազախ), Լեոնային Ղարաբաղի և Ադրբեջանի սահմանակից շրջաններում շուկաների, համատեղ փոքրիկ տնտեսական նախաձեռնությունների կազմակերպում: Միայն այս դեպքում կարելի կլինի հաղթահարել հայերի և ադրբեջանցիների փոխադարձ անվստահությունը, որը ձևավորվել է տարիների ընթացքում: Մինչդեռ, ներկայումս հաստատված «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» իրավիճակը և ժամանակն առավելագույնս պետք է օգտագործել կողմերի միջև համագործակցության ծրագրերի մշակման ու կենսագործման նպատակով: Դրա հաջող իրականացումը միայն կարող է վերականգնել հակառակ կողմի նկատմամբ կորսված վստահությունը:

5. Կարգավորման նոր միտումներ. խորհրդարանական դիվանագիտության ձևաչափի շուրջ

Խորհրդարանական դիվանագիտության շրջանակներում նախկինում ևս նախաձեռնություններ եղել են, որոնցից, մասնավորապես, ամենանշանակալի «Բիշքեկյան արձանագրության» ստորագրումն էր 1994թ. մայիսի 8-ին, հակամարտող կողմերի՝ Ադրբեջանի, Լեոնային Ղարաբաղի և Հայաստանի խորհրդարանների ղեկավարների մակարդակով:

Ղարաբաղյան հիմնախնդիրը ներկայացնելիս խորհրդարանական դիվանագիտական (նաև ընդհանուր) ջանքերը պետք է կառուցել առնվազն երեք մակարդակի դիրքորոշումների նախապատրաստման և ներկայացման մարտավարության վրա՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակում ադրբեջանական կողմի դիրքորոշումների բնույթը: Նպատակահարմար է հայ խորհրդարանական դիվանագիտական ջանքերը կառուցել հետևյալ մակարդակների դիրքորոշումների կառուցման վրա.

- առավելապաշտական (մաքսիմալիստական), երբ հայկական կողմերը վարում են ակտիվ հարձակողական դիվանագիտություն և ներկայացնում առավելապաշտական դիրքորոշումներ,
- փոխզիջումային (կոմպրոմիսային), երբ կարող է խոսք գնալ «տարածքներ կարգավիճակի դիմաց» կամ «տարածքներ խաղաղության դիմաց» և նման այլ մոտեցումների մասին,
- ինովացիոն-նորարարական, որի դեպքում խորհրդարանական դիվանագիտության շրջանակներում քննարկվում, մշակվում և շրջանառվում են սկզբունքորեն նոր մոտեցումներ:

Հակամարտության կարգավորման ներկա փուլում, կարծես թե, ադրբեջանական կողմը որդեգրել է «գրոյական կետից» սկսելու մարտավարությունը՝ փորձելով տարբեր միջազգային աստիճաններում Ղարաբաղյան հակամարտությունը ներկայացնել «նոր» լույսի (հումանիտար իրավունքի,

եվրոպական արժեհամակարգի) ներքո՝ խեղաթյուրելով հակամարտության իրական ակունքների, գենեզիսի և զարգացման դինամիկայի հետ կապված շատ հարցեր: Ադրբեջանական կողմի նման մարտավարության դեպքում առավել նպատակահարմար է կիրառել «առավելապաշտական» մոտեցումը: Այս դեպքում հայկական կողմերը պաշտպանողական դիրքորոշումից պետք է անցում կատարեն ավելի ակտիվ քաղաքական քայլերի և ձեռնարկումների: Մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ադրբեջանը տարբեր միջազգային կառույցների՝ ԵՄԽՎ և ՄԱԿ հարթակներն օգտագործում է Ղարաբաղյան հակամարտության սեփական տեսլականը ներկայացնելու համար, որպես նախահարձակ քայլ՝ առաջարկվում է *դիմել ՄԱԿ Գլխավոր ասամբլեային (իր իսկ կանոնադրության 10-րդ հոդվածի համաձայն) քննության առնել 1992թ. ընդունած այն որոշման իրավական համապատասխանության հարցը, համաձայն որի՝ Ադրբեջանը միջազգային իրավունքի սուբյեկտ է ճանաչվել Ադրբեջանի ԽՍՀ սահմաններում* [9]:

ՄԱԿ-ի կողմից ընդունված այս որոշումը, թերևս, արդարացված կարելի էր համարել միայն քաղաքական նպատակահարմարությունից ելնելով, հաշվի առնելով միայն այդ ժամանակահատվածում ԽՍՀՄ առանց ցնցումների և սահուն կազմալուծման, ինչպես նաև միջուկային զենքի չտարածման և միջազգային անվտանգության ապահովման հրամայականը:

Ինչ վերաբերում է այս որոշման իրավական համապատասխանությանը, ապա պետք է նշել, որ այն գուրկ է որևէ իրավական հիմքից, քանի որ.

- նախ՝ ՄԱԿ-ը 1992թ. ճանաչել է Ադրբեջանի Հանրապետությանը Ադրբեջանի ԽՍՀ սահմաններում, մինչդեռ այդ պետությունն իրեն հռչակել է 1918-1920թթ. Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետության իրավահաջորդ,
- երկրորդ, եթե նույնիսկ ընդունելու լինենք այն տրամաբանությունը, ըստ որի՝ այդ պետությունը ճանաչվել է իր խորհրդային սահմաններում, հետևաբար, պետք է ընդունել նաև, որ Լեռնային Ղարաբաղը, լրիվ օրինականորեն, գոյություն ունեցող իրավական ընթացակարգերին համապատասխան է դուրս եկել Ադրբեջանի ԽՍՀ կազմից՝ համաձայն 1990թ. ապրիլի 3-ի «Միութենական հանրապետություններին ԽՍՀՄ կազմից դուրս գալու կարգի մասին» օրենքի:

Հարկ է նշել, որ ՄԱԿ այդ որոշումը բավական շատ է շրջանառվում Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված տարբեր միջազգային փաստաթղթերում: Ադրբեջանի Հանրապետությունը, չհամարելով իրեն Ադրբեջանի ԽՍՀ իրավահաջորդ, միաժամանակ, միջազգային հանրության կողմից ճանաչվել է Ադրբեջանի ԽՍՀ «տարածքներում»: Այս հանգամանքն են նշում նաև եվրոպական կառույցները՝ խնդրի իրավաքաղա-

քական հիմքերին անդրադառնալիս:

Մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի հարցով ԵՄԽՎ կողմից զեկուցող Դ.Աթևիստունը 2005թ. զեկույցի բացատրական հուշագրի 5-րդ կետում ուղղակիորեն նշում է. «Լեռնային Ղարաբաղի տարածքին վերաբերող հակամարտությունն իրապես հակամարտություն է երկու սկզբունքների տարածքային ամբողջականության և ինքնորոշման: Մի կողմից՝ Ադրբեջանի սահմանները միջազգային ճանաչում են գտել այն ժամանակ, երբ այդ երկիրը հռչակել է անկախություն (1991թ.): Այդ ժամանակ Ադրբեջանի կազմում կար Լեռնային Ղարաբաղը: Մյուս կողմից՝ Լեռնային Ղարաբաղի հայկական բնակչությունը (որը մեծամասնություն էր կազմում նույնիսկ 1992-1994թթ. «էթնիկական գտումներից» առաջ) ձգտում է ինքնորոշման իրավունքի իրականացման» [10]:

Ի դեպ, ադրբեջանական կողմը փորձում է իրեն որպես միջազգային իրավունքի սուբյեկտ ներկայացնել 1991թ. (այդ ձգտումն ամրագրվել է նաև Դ.Աթևիստունի զեկույցում): Մինչդեռ այդ պետությունը միջազգային կառույցներին անդամակցել է 1992թ. հունվարի 30-ին (ԵԱՀԽ) և 1992թ. մարտի 2-ին (ՄԱԿ): Բացի այդ, ադրբեջանական կողմը փորձում է հնարավորինս չհիշատակել 1991թ. օգոստոսի 30-ին ընդունած «Անկախության հռչակագրով», իսկ այնուհետև 1991թ. հոկտեմբերի 18-ին «Պետական անկախության մասին» սահմանադրական ակտով Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդությունից հրաժարվելու և իրեն 1918-1920թթ. Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետության իրավահաջորդ հռչակելու հանգամանքը: Պարզ է, որ այդ քայլով Ադրբեջանը միանշանակորեն զրկվեց Լեռնային Ղարաբաղի նկատմամբ որևէ տարածքային հավակնությունից: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ Ադրբեջանի միջազգային իրավասուբյեկտության ձեռքբերումը եղել է ավելի շատ *քաղաքական, այլ ոչ թե իրավական* որոշում, և *տարածքային ամբողջականության սկզբունքը այս դեպքում կիրառելի չէ*:

Փաստորեն, 1991թ. հռչակած անկախ պետականության ակտով Ադրբեջանը ոչ միայն հրաժարվում է Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդությունից՝ դրանով իսկ զրկվելով Ադրբեջանի ԽՍՀ-ին հանձնված տարածքների ԼՂ-ի և Նախիջևանի նկատմամբ հավակնություններից, այլև՝ *միջազգային իրավունքի տեսանկյունից «օկուպացված տարածքներ» են հանդիսանում Նախիջևանը և Ղարաբաղի մնացած տարածքները, որոնք ներկայումս գտնվում են ադրբեջանական վերահսկողության ներքո* («առավելապաշտական» դիրքորոշում):

Այս անհամապատասխանության մասին չպետք է մոռանալ, ընդհակառակը, պետք է դնել լայն շրջանառության մեջ, հատկապես այն կտրվածքով, որ նախկին խորհրդային միութենական հանրապետություններից (մերձբալթյան երկրներից բացի) միայն Ադրբեջանն է հրաժարվել Ադրբե-

ջանի ԽՍՀ իրավահաջորդությունից:

Փոխզիջումային դիրքորոշումների որդեգրման դեպքում, բնականաբար, բանակցային ռազմավարությունը կառուցվում է «կոշտ առևտրի» մարտավարության վրա, որի դեպքում արդեն խոսք կարող է գնալ «տարածքներ կարգավիճակի դիմաց», «տարածքներ խաղաղության դիմաց» կամ այլ նման բանաձևերի մասին, որոնք, սակայն, կարող են քիչ արդյունավետ լինել:


Նմանատիպ էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման ժամանակ, փոխզիջումային լուծումների գնալիս, միշտ զիջվածք հակամարտող կողմերի համար ավելի ցավագին է ընդունվում, քան ձեռքբերածը:

Իրականում փոխզիջումների տեխնոլոգիան և փոխզիջումային մշակույթի ձևավորումը բավական բարդ և երկարատև քաղաքական գործընթացի արդյունք է: Փոխզիջումային լուծումները հենվում են այն սկզբունքի վրա, որ կողմերն, ընդհանուր առմամբ, մնում են չբավարարված կամ կիսով չափ բավարարված: Բացի այդ, փոխզիջումային հիմքով որոշումների ընդունման ժամանակ հարկ է նաև հաշվի առնել հետևյալ կարևոր հանգամանքները.

- խոստում են, արդյոք, հակամարտող կողմերը «միննույն լեզվով», այսինքն՝ ճշգրտված է, արդյոք, հակամարտության ընկալման հիմնական հասկացության չափարարը,
- հստակեցված են, արդյոք, նրանց միջև փոխզիջման համարժեքությունն ապահովող օբյեկտիվ չափանիշները և այլն:

Փոխզիջումների գնալիս հստակ պետք է ունենալ նմանատիպ հարցերի պատասխանները:

Խորհրդարանական դիվանագիտության շրջանակներում ինովացիոն-նորարարական դիրքորոշումների կառուցման մասին խոսելիս՝ պետք է կարևորել սկզբունքորեն նոր մոտեցումների մշակումն ու դրանց համապատասխան հիմնավորումների ներկայացումը: Մասնավորապես, երբ խոսում ենք փոխզիջման մասին, այն սահմանափակում է հնարավոր այլ օպտիմալ լուծման տարբերակների փնտրտուքը (*տե՛ս գծապատկերը*).



Ինովացիոն-նորարարական մոտեցումների ներկայացման առումով, թերևս, կարելի է քննարկել մի քանի տարբերակներ: Մասնավորապես, ԵԱՀԿ Մինսկի խմբի կամ այլ եվրոպական կառույցների շրջանակներում ԼՂ հիմնահարցի կարգավորման մոդելների մեջ կարելի է ներառել հետևյալ մոտեցումը. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը դիտարկել ոչ թե զուտ որպես մոնոթնիկ հայկական պետություն, այլ այնպիսի պետական կազմավորում, ուր երաշխավորված կլինեն, այդ թվում նաև ինստիտուցիոնալ-սահմանադրական ձևով, ադրբեջանական փոքրամասնության իրավունքները: Եթե այսօր, նույնիսկ հակամարտության վերջնական կարգավորման դեպքում, դժվար է պատկերացնել, որ Հայաստան կամ Ադրբեջան կարող են վերադառնալ փախստականները (ինչն արձանագրված է նաև քիուեսոյան փաստաթղթում), ապա դա կարելի է ընդունել ԼՂՀ պարագայում: Այս դեպքում ադրբեջանական կողմի համար նման առաջարկից հրաժարվելը կարող է ունենալ «բումերանգի էֆեկտ»: Եթե Ադրբեջանը համաձայն չէ, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն վերադառնան այն 30.000 ադրբեջանցիները, որոնք բնակվում էին այնտեղ մինչև հակամարտության բորբոքումը և որոնց անվտանգությունը կերաշխավորվի ԼՂՀ իշխանությունների կողմից, ապա ինչպե՞ս, հակառակ դեպքում, Լեռնային Ղարաբաղի հայերը կհամաձայնեն ութ միլիոնանոց Ադրբեջանում ապրելու մտքին թեկուզև ինքնավարության ամենաբարձր աստիճանի պայմանով:

Այդ դեպքում արդեն, գուցե, տրամաբանական կարող է թվալ «լրացուցիչ հանրաքվեի» գաղափարը, բայց ոչ թե ինքնորոշման հանրաքվեի, այլ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության *նոր սահմանադրության ընդունման հանրաքվեի* կազմակերպման միջոցով, որին այդ դեպքում իրենց մասնակցությունը կունենան նաև Լեռնային Ղարաբաղի ադրբեջանցի բնակիչները:

Կարգավորման հեռանկարների տեսանկյունից ինովացիոն-նորարարական մոտեցումների կիրառման մեծ ներուժ կա եվրոպական հանրությունում հարավկովկասյան երկրների ինտեգրման համատեքստում: Հակամարտության փոխակերպման նման ուղի է նախանշում նաև հանրահայտ բախումնաբան Յ.Գալթունգը, որը եվրոպական ինտեգրման մեջ է տեսնում Ղարաբաղյան հակամարտության դրական փոխակերպման և «տրանսցենդի» մեթոդի կիրառման իրական հնարավորությունները, որի դեպքում առավելագույնս կարելի կլիներ բավարարել հակամարտության կողմերի շահերը [11]:

Դեկտեմբեր, 2005թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Абасов А., Хачатрян А., Карабахский конфликт. Варианты решения: идеи и реальность, М., 2004.*

2. «Հայաստանի Հանրապետություն», 30 մարտի 2005թ.:
3. ԵԱՀԿ պատվությունը, գործունեությունը, հեռանկարները, Եր., 2005, էջ 26:
4. [www. http://icg.org](http://icg.org)
5. *Pomerance M.*, Self-determination in law and practice: The new doctrine in the United Nations. The Hague: Martinus Nijhoff Publishers, 1982, p. 73.
6. *Jacobson J.*, Notes on self-determination // *New Politics: A journal of socialist thought.* 1992, N 1, pp. 53-54.
7. [www. osce.org](http://www.osce.org).
8. [www. kazimirov.ru](http://www.kazimirov.ru)
9. Устав ООН и Статут Международного Суда, Нью-Йорк, 1994, с. 11.
10. [www.http://newsvote.bbc.co.uk](http://www.newsvote.bbc.co.uk) (03.02.2005).
11. [www. transcend. org](http://www.transcend.org).

ПЕРСПЕКТИВЫ УРЕГУЛИРОВАНИЯ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА

Хачик Галстян

Резюме

На постсоветском пространстве по своему генезису и продолжительностью конфронтации самым древним и кровопролитным оказался Карабахский конфликт, который одновременно отличается также и сложностью своего урегулирования. В этой статье из конфликтной проблематики карабахского урегулирования выделяются 4 важных компонента: проблема статуса Нагорного Карабаха, проблема беженцев и вынужденно перемещенных лиц, вопрос обмена территорий и вывода вооруженных сил, проблема открытия и деблокады коммуникаций.

Другим критерием, на основе которого рассматриваются перспективы урегулирования Карабахского конфликта, является изменение формата переговорного процесса. В частности, в контексте карабахского урегулирования можно заметить активизацию формата парламентской дипломатии, в рамках которого сегодня как конфликтующие стороны, так и международные посредники пытаются найти общие подходы к решению проблемы. В этом отношении подчеркивается важность усовершенствования механизмов армянской парламентской дипломатии как реальной основы объективного представления карабахской проблемы в международных организациях и на разных форумах.